



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 5 Ապրիլ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 6 Ապրիլ. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ չարչարանաց եւ մտանելոյն ի վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէ՛հ Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 7 Ապրիլ. Դ. Կիրակի Քառասնորդաց. Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբդ. Ղազարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 13 Ապրիլ. Սրբոյ Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ սարքուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթսայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք, Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերեզմանին եւ Գիւտ Խաչի այրին ուխտեքէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն՝ թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 14 Ապրիլ. Ե. Կիրակի Քառասնորդաց: Դատաւորին: Առաւօտեան ժամը 6:45-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր

Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Ժամը 9:45-ին Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի կատարեց իր երկրորդ մուտքը, ապա Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ պատարագեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը: Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի հանդիսապետութեամբ պատարագիչ Սրբազան Հօր, կատարուեցաւ մեծահանդէս թափօր՝ երկու անգամ Քրիստոսի Սուրբ Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ: Թափօրը վերջացաւ Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Ուրբաթ, 19 Ապրիլ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 20 Ապրիլ. Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 21 Ապրիլ. Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ. Յիշատակ Սրբոյ Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւնը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեց դէպի Ապրիլեան զոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ ոգեկոչման

արարողություն:

Հինգշաբթի, 25 Ապրիլ. Երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին «Հանգստեան» ժամերգությունը:

Ուրբաթ, 26 Ապրիլ. Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալի» եւ «Խաղաղական» վերջին ժամերգությունները:

Շաբաթ, 27 Ապրիլ. Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրէ-խաղիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ապա մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգություն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 28 Ապրիլ. Ծաղկազարդ: Առաւօտեան ժամը 6:15-ին հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգությունները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ: Հայոց երկրորդ մուտքէն ետք նոյն տեղւոյն մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գրեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորուոց թափօրները:

Վանք վերադարձին, հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ Ժառանգաւոր սաները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանուց Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնբասէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սըր-

բազան Հայրը:

«Դոնբասէք»-ի արարողություն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Երեքշաբթի, 30 Ապրիլ. Աւագ Երեքշաբթի: Յիշատակ տասն կուսանաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւիթը գլուխով Հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Հինգշաբթի, 2 Մայիս. Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթերցաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան մասին ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիշխարատներով լեցուն:

Գիշերուան ժամը 7:00-ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»:
«Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթնութեան մէջ «Յայսմաւորքի Ամպիոն»-էն քարոզեց Արեւմտեան Եւրոպիոյ Հայրապետական Պատուիրակ՝ Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Ժամերգությունեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչիք Քրիստոս»-ի խնկարկությունը:

Ուրբաթ, 3 Մայիս. Աւագ Ուրբաթ: (Յիշատակ Զարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի): Կէսօրէ ետք ժամը 1:15-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը: Արարողութեանը նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 4 Մայիս. Աւագ Շաբաթ (Ճրագաւոյց Զատիկի): Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանի ձեռքէն:

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ն.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկստններով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսարարայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կնքումէն: Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենագոյի ուխտաւորներուն: Ապա տեղի ունեցաւ եռադարձ Թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը: Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց Թափօրը:

Մեր Թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց Թափօրները:

Վանք դարձին, դարձեալ սկստններու նշուագախումբով առաջնորդուած, Թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան շուրջառագեցտ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին Թափօրին մէջտեղէն քալելով: Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան: Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր Տաճար:

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատիկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուց Տ. Աղան Վրդ. Գոգչեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ, ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն:

Ճրագալոյցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան Տաճարին մէջ՝ պատարագեց Հայաստանէն ուխտաւորաբար Սուրբ Երկիր ժամանած՝ Տ. Համազասպ Քհնյ. Գրիգորեան եւ ի Ս. Հրեշտակապետաց՝ պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 5 Մայիս. Ս. ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Կէս գիշերէն ետք ժամը 1:45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ Թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղւոյն շուրջ: Մեր Թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց Թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ «Խաչի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը:

Առաւօտեան ժամը 7:15-ին Լուսարարապետ Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ կատարեց Հայոց երկրորդ մուտքը Ս. Յարութեան Տաճար, եւ կարճ դադարէ ետք Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց եւ քարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վերայ:

Վանք դարձին հայոց Թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատիկական մեծահանդէս «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 6 Մայիս. Բ. օր Ս. Զատիկ: Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց եւ քարոզեց Արեւմտեան Եւրոպիոյ Հայրապետական Պատուիրակ՝ Տ. Խաթակ Արք. Պարսամեան: Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, իսկ Միաբան Հայրերը մասունքներով, եռադարձ Թափօր դարձան, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ»՝ ուխտաւորներուն բարի ճանապարհ մաղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 7 Մայիս. Գ. օր Ս. Զատիկ: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Ս. Պատարագէն ետք հանդիսապե-

տուժեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ վստահեցնելուն նշանները:

Շաբաթ, 11 Մայիս.- Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 12 Մայիս.- Նոր Կիւրակէ (Կրկնագատիկ): Հստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Լուսահան Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 18 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Կէսօրէ ետք, գլխաւորութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Կիրակի, 19 Մայիս.- Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Առաւօտեան ժամը 6:15-ին հանդիսապետութեամբ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Հայոց երկրորդ մուտքէն ետք Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագի Սրբազան Հայրը Ս. Պատարագի վերջաւորութեան նախագահեց նաեւ Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 25 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Կիրակի, 26 Մայիս.- (Կարմիր Կիւրակէ): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատար-

ւած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 1 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նիշէ Վրդ. Ուշքունեան:

Կիրակի, 2 Յունիս.- Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ սեղանին վրայ, որուն վերելը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Շաբաթ, 8 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 9 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Կէսօրէ ետք, Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Զորեքշաբթի, 12 Յունիս.- Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ լարուած վրանամատրան մէջ նախ կատարուեցաւ Պղծեալ Տաճարի արարողութիւն, ապա պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի:

Հինգշաբթի, 13 Յունիս.- ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍ: Առաւօտուն Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատար-

ւած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարագիչ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 15 Յունիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 16 Յունիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճոնտուրեան:

«Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 22 Յունիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Երեկոյեան՝ Հոգեգալստեան նախատօնակին Ս. Յակոբ, նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէ»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կիրակի, 23 Յունիս.- ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: Գիշերային ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի կատարուեցաւ «Անդաստան» Ս. Յակոբ: Ապա Միաբանութիւնը Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուռէն ներս, ուր եւ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը: Ժամարարն էր հանդիսապետ Սրբազան Հայրը, որ Պատարագի ընթացքին կարգաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը: Պատարագի վերջաւորութեան նախագահութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի կատարուեցաւ Հոգեհանգըստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Կէսօրէ ետք, Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն:

Շաբաթ, 29 Յունիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Վրդ. Արտեման:

Կիրակի, 30 Յունիս.- Սկիզբն Յարութեան Կիրակէից եւ յիշատակ եղիայի Մարգարէին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Արշակ Արդ. Ղազարեան:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 1 Յուլիս.- Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 5 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 6 Յուլիս.- Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի Վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրադիր:

Կիրակի, 7 Յուլիս.- Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան: «Հայր Մեր»-էն առաջ «Հայրապետական մաղթանք»-ին նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 13 Յուլիս.- Սրբոցն՝ Մեծին Ներսիսի Հայրապետին մերոյ եւ Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճոնտուրեան:

Կիրակի, 14 Յուլիս.- Գ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագեց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկա-

սարեան:

Ուրբաթ, 19 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 20 Յուլիս. Գիւտ նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամաւորաւ էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կիրակի, 21 Յուլիս. Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Չորեքշաբթի, 24 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 25 Յուլիս. Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակա-

պետաց: Պատարագեց եւ քարոզեց Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչ՝ Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Շաբաթ, 27 Յուլիս. Սրբոցն՝ Տրդատայ Թագաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդրխտոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամաւորաւ էր Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Երեկոյեան Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 28 Յուլիս. Ե. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պատարագը մատուցց Տ. Խաղ Մ. Վրդ. Ճոննտուրեան:

Պատրաստեց՝ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԿԵԱՆԳ ԹԱՔՈՒՇԵԱՆ

